ը սաստիկ պահանջել գիտեն: Իր երկրում մի այսպիսի անձին գուցէ ժամերով սպասել կը տային մի որեւիցէ իշխանի կամ հասարակ ազնուականի նախասենեակում: Բայց Ասիայում ամենանշանաւոր անձանց դռները բաց են նրա համար, որովհետեւ եւրոպացի է եւ ճանապարհորդ, կարող է վատ խօսել, կարող է վատ գրել նրանց մասին: Ամէն տեղ սիրալիր ընդունելութիւն, պատրաստականութիւն եւ յարմարութիւններ է գտնում: Նա կարծում է, որ այդ մարդիկը բնականապէս բարի են, ազնիւ են, մեծահոգի են, բայց չգիտէ, որ նրանք նոյնիսկ դժբախտ Շուլցի գլուխը կտրողներն են, միայն այժմեան հանգամանքները ստիպել են նրանց այլապէս վարուել: Իր տեղեկութիւնները երկրի տնտեսական եւ հասարակական դրութեան մասին՝ քաղում է նա իր հիւրընկալի պատմութիւնից: Նրա սեղանի մօտ նստած ժամանակ, նրա բարերար ազդեցութեան ներքոյ, գրում է նա իր յիշատակարանը: Իսկ այն սեղանը, որ իր կեանքում նա երբեք չէ տեսել, այնքան ճոխ է, այնքան հրապուրիչ է, որ բոլորովին շլացնում է, խելքից հանում է նրան: Նա իր հիւրընկալից ստացած սուտ ու սխալ տեղեկութիւնները նոյն ախորժակով է զետեղում իր ճանապարհորդական յիշատակարանի մէջ, ինչ ախորժակով որ խմում է նրա անուշահոտ շերբեթները կամ ինչ ագահութեամբ որ զետեղում է իր փորում նրա լաւ պատրաստած «փախլաւան»: Իսկ այդ սուտ ու սխալ տեղեկութիւնները, որոնք, ի հարկէ, ի նպաստ մահմեդականների են լինում, եթէ մի օր տպագրութեամբ լոյս են տեսնում, սաստիկ ազդում են եւրոպացիների հասարակական կարծիքի վրայ: Եւ այդպէս, Եւրոպացի ճանապարհորդը, միայն արտաքին հրապուրիչ կեղեւից դատելով, առանց միջուկը քննելու, ինքը սխալ գաղափարներ է կազմում եւ մոլորեցնում է իր հայրենակիցներին: Դիցուք թէ ճանապարհորդը շրջանկատ, խորազնին, անաչառ եւ բարեխիղճ մէկը լինէր, բայց ի՞նչ կարող է նկատել նա իր շուտափոյթ, անցողական ճանապարհորդութեան մէջ, միայն թեթեւ հայեացքներ ձգելով, մանաւանդ, երբ նրա առաջնորդները այդպիսի փաշաներ կամ դրանց նմանները կը լինեն: Մի ժողովրդի դրութիւնը լաւ հետազօտելու համար պէտք է դիմել իրան, ժողովրդին եւ ոչ թէ նրա կառավարիչներին:

— Եղեռնագործը սովորում է ինքն իր անձի փաստաբանը լինել, — շարունակեց նա: — Այդ մարդիկը, սկսեալ առաջին վէզիրից, մինչեւ վերջին զափթիան, շատ լաւ գրտէին իրանց յանցանքները, եւ այդ պատճառով նրանց լեզուում կազմոել է մի ամբողջ մշակուած ճառ իրանց արդարացնելու համար: Մի այդպիսի ճառ ես այսօր լսեցի ինձ ամենայն քաղաքավարութեամբ հիւրասիրող փաշայի բերանից: Նրան չէ կարելի յիմար կոչել, ընդհակառակն, նա ինձ բաւական խելացի երեւաց: Ես ներկայացայ նրան որպէս